

ՄԸՐՂԻՍԱՀԱՐ, Կ. Ֆի-ր-դ-ի-ե-հ-է-ր. (مرغ سحر) Թռչուն  
առաւօտու, սոխակ. "ով քաղցրածայն մը-  
ղիսահար." 39, 45:  
ՄԸՐԸՐԵՄ, 64, 4:

ՆԵՂՈՍ? 67:

ՆՄԱՆԱԿ, նման, "ոչ դք չըկայ նմանակ." 56, 95:

ՇԱԲԱՇ, Կ. շապաշ, վաճ, լաճ, ապրիս եւն, bravo!  
"որ քեզ ասեն յովով շաբաշ." 65, 14:

ՇԱՏԼԸԽ, Կ. շաթլէք, ուրախութիւն, ցնծութիւն,  
զուարթախօսութիւն. "շաթլէս կէնէ ի վըայ  
վարդուն." 40, 10:

ՇԱՐԲԱԹ, Կ. շէրդէթի, շատ նուրբ բանուած պաս-  
տառի տեսակ մը. 63, 3, 5:

ՇԱՀ, Կ. շահ, Թագաւոր. 32, 41:

ՇԱՄԱՆԳԻՎՂ, մանրամաղ փոշի. 64, 5. 64, 11:

ՇԱՄՐԱՍ "Շամրաս ծաղիկ եւ քրքուճն." 63, 6:

ՇԻՐԻՆ, Կ. շիրին, քաղցր, անոյշ, գեղեցիկ. "շիրին  
լեզու." 34, 91. "շիրին շարբաթ կապել." 63, 5:

ՇՆՉԱԼ, շնչել. 70, 4:

ՇՈՒՐ տալ, գալ. 38. 69, 1:

ՉԵԿ ՏԱՐԻ, նահանջ տարի. 66:

ՊԱԼԱՍԱՆ, բալլամ. 36:

ՊԱՐՏԱԿԻՄ, ծածկուիլ. "պարտակեցաւ ի Թը-  
փէն." 56, 104:

ՊԻՏ, Կ. փէթ? գահ. կամ Կ. փէթ? արագ, փութով.  
"Սքանդար գու քեզ պէտ արայ." 75, 4:

ՋՈՒԱՊ, Կ. Ջէվաբ (جواب) պատասխան. "Ջուապ  
կու տայ ինքն յամէն դամ." 42, 55: